41. ՀԱԼՎԱՃԻ ԳՅՈՒՂԵԼ

Մե թագավորըմ կէղնի, անուն Հալվաճի Գյուղել։ Էրկու զավակ կունենա, մեծի անունը Պողոս, պստիկինը՝ Պետրոս։

Խեյլի ժամանակ գընցնի, կ'ըսե.

— Զավակներս, ես աշխարք պիտի պտտվիմ։ Մայրիկդ էլ հոս է, դուք անոր խզմաթ էրեք, մինչև ես գամ։

Էն էրկու ախպերը ֆուկարա էղան, ուրար խելք խելքի զարկեն կը, թե մենք ի'նչ գործ էնենք։

Մեծ ախպերը կ'ըսե.— Մենք էրթանք էշակչություն էնենք քյոմուր կրենք։

Մեկ հայվանըմ առան, գացին քյոմուրի։ Մեշայի մեջը կաշեն, թե ծառի գլուխը մե հավքըմ կա։ Պզտիկ ախպեր մեծ ախպերին կըսե թե.— Ես էս հավքը պըտի բռնեմ։

— Քեզի տեսնեմ ախպեր շան, թե բռնես էդ հավք, շատ փարա կէնա։

Պզտիկ ախպեր կըզկտալեն կը բանցրանա ծառի գլուխ։ Անձրև էկեր էր, հավքը կըզկտեր էր, գլուխը ներս էր քաշեր։ Մինչև օր հավք պըտի թռներ, պզտիկ ախպեր օտներեն բռնեց, ծառեն իջավ ցածը, հավքը բերավ դրեց իրեն բեռան վրան ու առան էկան։

Հավքն օր բերեցին, յահուդիըմ ռաստ էկավ, ըսավ.

— Ձա'գս, էս հավքը ծախե՞ս կը։

Ըսավ.— Ծախեմ կը։

Ըսավ.— Տաս ղուրուշ տա՞մ։

Ըսավ.— Տաս ղուրուշի էս հավք կուտա՞ն։

Ըսավ.— Քեղի հարիր ղուրուշ տամ։

Էրկու ախպեր մեկտեղեցան, էդ հավքը տվեցին էդ մարթունը։

Յահուդին առավ էդ հավքը, բերեց տվեց տղաների մորը, ըսավ.— Այսի չիդեր, բյոդրեկ հանե, ձիգ թավան թող էփի, ուտեմ կը, միսը դուք կերեք։

Թընղըրի ցանը պակսեր էր, գնաց ցան բերեր։

Մինչև ցան բերելու տղաներեն մեկը՝ մեկ կտոր չիգյար կերավ, մեկել տղեն մեկ կտորը կերավ։

Պառավն էկավ ճըճգռհավ թե.— Զագերս, հ՞ընչո՞ւ կերաք, ես էն մարթուն ի՞նչ պատասխան տամ հիմա։

Ըսին թե.— Կերանք գնացինք, ի՞նչ էնենք, դուն մեղի բան չըսեցիր։

Իրկաց Յահուդին էկավ, ըսավ.

— Պառավ, ո՞ւր է մե չիդյտրը, բյոդրեկը։

Ըսավ.— Քեղեն էլ ի՞նչ պահեմ, ես մինչև գնացի ցան բերելու, էկա որ տղաքը կերեր էին։

Էս անգամին Յահուդին նեղացավ։ Պառավն էլ տղոցը նեղացավ։ Էնոնք էլ էրկու ախպար ձեռքը ձեռքի բռնեցին ու քաղքեն դուս ելան գնացին։

Գնացին ուրենց հավքի տեղը, ելան էն ծառի գլուխ, աշեցին օր էրկու հատ հավկիթ կա, սիրուն, խետված[1] ըռունդ հավկիթ են։

Հավկըթներ կ'առնեն, դուքան քաղաք, Յահուդին դեմ գուքա նորեն։ Բերեն էդ հավկըթները Յահուդուն ծախեն կը, հատը տաս ղուրուշի։

Յահուդին կ'առնե էդ հավկըթները, կը տանե կենա էն պառվուն, էփել կուտա, որ դեղ ցանե վըրեն ուտե, օր թե ուր սրտին դեղ դարման էղնի։ Էփելեն ետքը Յահուդին կէրթա դեղ բերելու։ Տըղեքն դուքան կը, էդ կճպած հավկըթներեն մեկը կը խլլե մեկը կուտե, մեկալը կը խլլե մեկը կուտե։

Յահուդին օր էկավ, ըսավ.— Պառավ, ի՞նչ ըրիր հավկըթները։

Ըսավ թե.— Մինչև գացիր դեղը բերելու, իմ տղեքներ կերան։

Ըսավ.— Հացով կերա՞ն, թե առանց հացի։

Ըսավ.— Առանց հաց։

Պառվին կ'ըսե.— Պառավ, էդպես չ'էղնի։ Առավոտուն էրկու հատ օղլուշաղ-աղշիկ կը բերես հոս կը կայնեցնես, տղոցը անոթի փորին մեկ մեկ արախ կուտաս, անոնք արախը խմեցին քիմի՝ աղ-

[1] Ներկված (Ս. Բ.)։

ջիկներ թող օտքով զարկեն, զարկելուն քիմի ջիգյար, բյոգրեկ գուքա դուրս։

Առավոտուն գնաց աղջիկներ բերեց։ Մեկ մեկ արախ տվեր տղեքներուն, անոնք խմեցին, աղջիկներ մեկ մեկ թաքմա զարկեցին տրզեքներուն։ Զարկելուն պաշտան ջիգյարներ էկան դուս։ Պառավն առավ ձեռքը, տարավ տվավ Յահուդուն։ Յահուդին առավ, էս անգամին, դեղով կուլ տվեց։

Տղաներուն դուս էրավ, տղեք ելան գնացին։ Գնացին դեղեն գուս, մե գերեզմանատան մեջ մնացին։ Պզտիկ ախպար գնաց քաղաք, տեղ գտնալու։ Մեծը նստավ բեքլեմիջ արաց ու երգեց.

Էզելե դիվանե
Էոմրյու էզելե,
Սարալդի գյուլ բենգզիմ
Դյոնտի կէզելե
Բեգլե սեվտյու ճիգըմ
Բալքի դյուզ գելե։
Բեքլերըմ յոլլարի
Գելմեդի գարդաշ
Ինքի զարտաշ բիր փաթիշահ
Էվլադի
Կարդաշ բենի մեզերլըքտա
Էգլեդի[1]։

Յահուդու կերած ջիգյար բյոգրեկ մուրազատուր էր, Յահուդին օր որ դուրին օր էրթար, բացվեր կը։ Էս անգամիս Յահուդին փետրմ ձեռք առած կէրթա, մե փակած դուռը փետով կը զարկե, բացվի կը։ Մտնի կը նե, կաշե քի մեկ մարթըմ նստեր եմագ կուտե։

Էդ մարթ Յահուդու վըրեն խնդաց։ Էս անգամին Յահուդին ուր միրքեն թելըմ կը քաշե, կը կապե էդ մարթուն, անկըշեն հետ փեդին կը մխե, փըլավը կուտե, գելնի կ'էրթա։

Կէրթա բինակի[2] քարի վրա նստե կը։ Աշեց որ էն դիեն մեկ

---

[1] Տրորվի՛ր խենթ կյանքս տրորվիր
Դեղնեցավ վարդենիս դարձավ տերևի.
Սպասի՛ր սիրելիս,
Գուցե աշունը գա։
Կսպասեմ ճամփաներ
Ջեկավ իմ եղբայրս
Երկու եղբայր մեկ թագավորի որդի
Գերեզմանոցի մեջ ինձի սպասեցուց։ (Ս. Բ.)։

[2] Հեծնելու (Ս. Բ.)։

Հարամի բաշի էկավ։ Հարամի բաշին կը նմաներ մեկ ածդահեռ։ էկավ էդ պառավ մարթուն բարեըմ տվեց։ Յահուդին բարևն առավ։

Հարամի բաշին ըսավ.— Պառավ, դու ինչքա՞ն չաթին առար բարեը։ Դու ընձի չը սեպեցիր։

Պառավն ըսավ.—Ձսե՞պեմ որ թե, ինչ կէղնի։ Բըռնեց էդ առյուծի պես մարթու անկըշեն, տարավ էն փլավ ուտող մարթու քովը, մեխեց փետին։

Ելավ դուռը կայնավ, աշեց որ մեկ հատ մարթ մ'էլ ցածրեն դուքա կը։ էկավ հասավ հոդ, Յահուդուն, բարև տվեց։

— Բարև, Յահուդի,— ըսավ։

Յահուդին ըսավ.— Իմ Յահուդի էղնիլս ինչե՞ն դիտես։

Ըսավ.— Ես քու Յահուդի էղնելը որ չը գիտնամ, աշխարք ընչի՞ կը պտտիմ։

Դարցան ձեռք ձեքի տվին Յահուդու հետ, անուշ զրուցք էրին։ Յահուդին շատ սիրեց էդոր, առեց տարավ պատիվ էրավ։

Գալող մարթ աշեց, որ դեմը մեխով զարկուկ մարթըմ կա, ըսավ.— Սիրելի ջան, աս ի՞նչ է։

Ըսավ.— Ես շատ խիղճ ունեցող մարթ եմ, ինձի դեմ խոսող մարթեկաց տեղը էսպես է։

Ելան գնացին անապատի մեջ պըտըտվել։ Որտեղ օր գեշ մարթըմ կը բռնեին, կը բերեին էդ տան մեշը էդ փետին կը մխեին։ Ըսել դուզի քի, էդ տուն էղավ դիվատուն։

Տղոցը խաբարը տանք։

Պզտիկ ախպեր քաղաք շատ ժուռ էկավ, էկավ Պողոսին գտավ։ Գնացին քաղքեն դուրս ելան, պզտիկ տունըմ ռասա էկավ, մտան էն տան մեշը պառկան։

Առավոտուն օր գելնին հալավը հագնելուն, կաշեն օր ամեքի գլխու տակը տաս տաս ղուրուշ դրուկ էր։

Էգ էրկու տըղաք գելնին կէրթան քաղքի մեշ առուտուրի։ Կէրթան կաշեն կը, մեկ տունըմ շատ մտնին գելնին։ Էդոնք էլ բաշլայեցին էրթալ, որ բան իմանան։

Մեկին հարցուցին թե.— Էս ի՞նչ գործ է։

Ըսավ թե.— Հոս շատ սիրուն հըռունդ օղլուշաղըմ կա, կէրթան փարով տեսնին կը, որ մարթ օր շատ փարա տա, էնոր թեզ տանին կը էնոր դեմը։

Տղասներ շատ փարա տվին, մտան ներս։ Սիրուն օղլուշաղ խելքով էր, ըսավ.

— Էս փարեն ասպածատուր էր, էս փարեն չի պարպի, օրեցօր

կավելնա կը։ Ի՞նչրխ էնենք օր էսոնց փարի տեղը գիտնանք, առնենք։

Պետրոսը գնաց, ամմա Պողոսին պահեցին։

Աղջիկ ըսավ Պողոսին.— Տղա՛ ջան, սիրելի, էս ինչպե՞ս է, օր քու փարան չի պարպի, ուղիղն օր ըսես ես քեզի կառնիմ։

Մեծ ախպերն ըսավ Թե.— Դու էդպես միտքըմ ունիս, մենք էրկու ախպեր ենք, հեգեր մեկիս էլ գտնես կը, աղեկ կ'ըլա։

Աղջիկն ըսավ.— Ես մեկ եմ, մեկիդ կ'առնեմ։

Էս անգամին դարձավ տղին փորձելու, ըսավ.

— Աստված սիրես, էդ քու փարեգ հ'ո՞ւրդից է։

Էն էլ ըսավ Թե.— Իմ փարեն աստված կուտա։

Կնիկ շատ ընգավ իտոր ետև, Թե.— Աստված ընչի՞ ընձի չի տա, քեզ կուտա, հալբաթ դողրին պիտի ըսես։

Տըղան ըսավ.— Մեր դարտը ծանր է, մի փորձեր էդ տեղ։

Ըսավ.— Մինչև դու չըսես, ես քեզի կին չեմ էղնի։

Տղան ճարահատ մնաց ու խոսաց իրենց գլխու էկածը։

Ըսաց Թե.— Իմ փորիս մեջ հավկիթ կա, էն հավկթի սաբաբով իմ բարձի տակ փարա կէղնի, ասպածատուր է։

Աղջիկ բերավ, անոր գինի խմցուց, խելքն առավ գլխեն, Թաքմիքով զարկեց, հավկիթը բերնեն Թըռուց, ինքն առավ ու տղային բռնեց դուա ձգեց։

Տղան ելավ դուա, էս սոխախը պըտրտվավ, էն սոխախը պըտրտվավ, գնաց իրեն ախպորը գտավ։

Պետրոսը շաքարճում մոտ գնացեր է, ըսեր. «Ինձի քեզի մանչ էրա ես քու շաքարդ ծախեմ»։

— Լավ, դու ընձի տղա էղի, իմ շաքարը ծախի։

Գալոզ էրթողը էդ շաքարճու թուքանը մտներ գը, չունքի Պետրոսը շատ սիրուն էր։

Պողոս ժուռ էկավ, գնաց իրեն ախպորը գտավ, ըսավ.— Ախպեր, ես մնացի դուռը, ընձի էլ նե չես առներ։

Ըսավ.— Հայրիկիս ըսեմ։

Կանչեցին հայրիկին, խնդրեց Թե.— Հայրիկ էսիկ էլ իմ ախպերս է, էսիկ էլ ներս կառնե՞ս։

— Որ քու ախպերդ է, իմս էլ տղան է։

Պողոսին էլ նես առավ, իրեն ըրավ տղա։ Էրկու ախպերն էլ էլան էդոր հալալ որդի։

Մեկին շաքարճիութեն տվեց, մեկին էլ կալաթա[1] ծախել տվեց։

---

[1] Զիթ, կտավ (Ս. Բ.)։

Էնպես էլավ օր էդ քաղաքի շենլիքը դարձավ էդ էրկու ախպոր վըրեն, էնպես օր սիրուն էին։

Մեկ օր էն քաղքի Մանասե անուն թագավորը մեռեր է։ Շենլիքը բութուն թափան գնացին. էդ էրկու ախպերն էլ գնացին։

Դեվլեթ-ղուշին թողեցին, էկավ Պետրոսի գլխուն, Պողոսի ումուղին[1]։ Շենլիքը էկան Պետրոսին Պողոսին քըշեցին խարաբա տունըմ։ Գնացին, նորեն թողեցին դեվլեթ-ղուշին։ Դեվլեթ-ղուշին էկավ, իջավ տան էրթըկեն ներս, նստավ էն էրկու ախպոր վըրեն։

Խալխը նորեն շնորհակալ չ'էղավ, թե.— Էս ղարիբիք մուրացկան են, ի՞նչըխ պիտի թագավոր էղնին։

Շաքարճին ըսավ.— Հլը աշենք, էսոնք որի ցեղն են։ Բալքի թագավորի ցեղ են։

Հալիվորը կը կանչե ատ էրկու տղեք, խոսեցնել կուտա, կըսե.— Դուք ո՞ւմ տղեն եք, ո՞ւմ տընեն եք։

Կըսեն թե.— Մենք Հալվաճի Գյուզալի տղեն ենք, մենք թագավորի ցեղ ենք։

Շենլիքը կը կանչե թագավորի վաքիլը, կըսե թե.— Աստոծումընեն է, էսոնք թագավոր նստեցուենենք։

Բերին օծին թագավոր, արևելքի կողմին թագավոր ըրին Պետրոսը, Պողոսը մնաց արևմուտքի կողմին թագավոր։

Էսոնք գիտնական են, գիտեն քի օխտը տարի թանգութեն գըլլի, էդոնք օխտը տարի հաց կը գնեն, կը ժողվեն ամբար կ'էնեն։

Թանգութեն օր էղավ, խալխը դառնա գը էդ հացի վրան։

Մանասե թագավորի կնիկը շատ սիրեց Պետրոսին։

Մեկել մարթիկ ղրպարտութեն ըրին, ըսին.— Հալբաթ մե բանըմ կա,— բերին Պետրոսին քցին հորը։

Բանցը բազրգանըմ գուքա հորեն ջուր կը քաշե, օր իր ձիրստանքը ջրե։ Մարթը գիջու կը քիմի, կ'աշե քի հորի մեջ մարթ կա։ Բազրրգանը կըսե քի մարթը հանեք հորեն, բերեք ընձի։

Պետրոսին հանեցին հորեն, բազրգանը ձիու վրեն դրեց, առեց տարավ ուր քաղաք, բազրրգանը հարցուց Պետրոսին թե. «Ի՞նչ մարթ ես, ո՞ր քաղքեն ես»։

Պետրոսն էլ պատմեց իրեն գլխի էկածը։

Բազրրգանը կասե.— Օր էսպես է, էլի ընձի ավլագ։

Պետրոսն էղավ բազրրգանի ավլագ։

Բազրրգան իրեն մտքին՝ տանիմ իմ աղջիկը կուտամ էսոր, կանեմ ընձի տան-փեսա։

---

[1] Ուս (Ս. Բ.)։

Պողոսը ընգավ ուր ախպոր փնտրռելու։ Էկավ ընգավ սպուե սար, քարե քար, էկավ հասավ բազբրգանի քովը, փնտռեց իրեն ախպերը գտավ, շատ ուրախացան, Պողոս ելավ գնաց։

Պետրոս էղավ բազբրգանի փեսա, էլ չը գնաց թագավորութե-նի վրա։

Դրացեստանքը աչքըլուս ըրին, ու իրեն աղչիկ Սոֆիան պսակեց Պետրոսի վրա։